ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
ԵԳՊԱ մագիստրոս (2016)

Վանի թագավորության ոաշտամունքային արվեստում գեղարվեստական առանձնահատուկ ոճավորումներով և խորհրդաբանությամբ ուրույն տեղ են գրավում դիցարանի Իսալդի, Թեյշեբա և Շիվինի գլխավոր աստվածությունները: Գերագույն աստվածությունների այս եռյակը, Միհերի դռան արձանագրության[1] համաձայն, գլխավորում է Իսալդին: Ինչոեես Միհերի դռան, այնոեես նաև այլ սեոագիր տեքստերում ոահոանվում է գերագույն աստվածությունների հերթականությունը. սկզբում Իսալդին, այնուհետև հաջորդաբար Թեյշեբան և Շիվինին: Ամենայն հավանականությամբ նրանք հանդիսացել են երկնային երևույթներ խորհրդանշող աստվածություններ, որի վկայությունն է Մենուա արքայի մի արձանագրության անեծքի բանաձևում Իսալդիին, Թեյշեբային և Շիվինիին երկրային աստվածներից զատելու փաստը[2]: Այս առիթով ուշագրավ է Իսալդի անվան Hal արմատը, որն ըստ արևմտյան անդրկովկասյան լեզուների ստուգաբանվում է որոեես «երկինք»[3]: Դիցարանում ակնհայտ է գլխավոր աստվածությունների եռյակի հիերարխիկ բնույթը, քանի որ ուրարտական սեոագրերում այս կանոնի որևիցե խախտում չի հանդիոում[4]: Երկնային գլխավոր աստվածությունների գերակայության վկայությունն է նաև այն, որ հենց այս աստվածների հետ են կաովել մարդկանց կյանքում կարևոր նշանակություն ունեցող բնության այնոիսի երևույթներ, ինչոիսիք են փոթորիկն ու անձրևը (Թեյշեբան որոեես տարերքի խորհրդանիշ) և արևը (Շիվինի): Որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ Իսալդին համարվում է բուսականության և ոտղաբերության[5], ինչոեես նաև ըստ վիմագրական աղբյուրների հանդես է գալիս որոեես ոատերազմի հովանավոր աստվածություն[6]: Համադրելով այս երեք աստվածների հաջորդական դասավորությունը՝ կարելի է եզրակացնել, որ ուրարտացիների ոատկերացումներում նրանք մարմնավորել են բնության կարևորագույն և միմյանցով ոայմանավորված երևույթները՝ բուսականություն (կյանք, ոտղաբերություն), տարերք և արև: Ուրարտական դիցարանի աստվածային եռյակի առանձնահատկությունները համադրելի են հնդեվրոոական եռամաս դիցաբանական գաղափարախոսության հետ, որի համաձայն գլխա-

* Հոդվածը ոատրաստվել է 2016 թ. ոաշտոանած՝ ԵԳՊԱ արվեստի ոատմության և տեսության բաժնի մագիստրոսական թեզի հիման վրա (ղեկավար՝ Սիմոն Հմայակյան):

վոր աստվածներն իրենց մեջ կրում են երեք հիմնական գործառույթներ՝ գերագույն իշխանություն, ֆիզիկական ուժ և պտղաբերություն[7]: Վանի թագավորության դիցարանում իշխող դեր ունեցող այս աստվածություններին կարելի է նմանեցնել միջագետքյան Աշուր-Ադադ-Շամաշ կամ, օրինակ՝ հնդկական Բրահմա-Վիշնու-Շիվա հզոր աստվածային եռյակների հետ:

Նշանակալի է եղել նաև Խալդի, Թեյշեբա և Շիվինի աստվածությունների պաշտամունքը Ուրարտուի մշակութային կյանքում: Ուրարտացիների հոգևոր կյանքում կարևոր նշանակություն ունեցող սրբությունների պատկերներով զեղարվեստական հորինվածքները կարելի է դիտարկել որպես ուրարտական յուրահատուկ պատկերներ, որոնց պատկերագրական սյուժեները ներկայացնում են որոշակի ծիսական արարողություններ և գաղափարներ: Վանի թագավորության գլխավոր աստվածությունների և նրանց պատկերագրական կերպարների ուսումնասիրության գործում նշանակալից է Կարմիր բլուրում հայտնաբերված 12 սմ լայնությամբ և մոտ 1 մ երկարությամբ բրոնզե մի գոտի (նկ. 1): Ուշագրավ է մետաղագործական արվեստի այս յուրօրինակ նմուշի վրա պատկերագրային ռիթմի զգացողությունը, պատկերների համաչափ տեղադրումը հորինվածքում և նուրբ ճաշակի արտացոլումը զարդանախշերում: Աստվածությունները պատկերված են գոտու ուղղագիծ երկայնքով շրջանակված հարթության զարդանախշային մետոդներում: Յուրաքանչյուր հավասարաչափ բաժանմամբ դաշտում դրվագված են առյուծի և ցլի վրա կանգնած աստվածության մարդակերպ պատկերներ, ինչպես նաև յուրահատուկ ոճավորմամբ կենաց ծառ ներկայացնող զարդամոտիվ:

Ընկալելով աստվածություններին մարդակերպ՝ ուրարտացիներն ամենայն հավանականությամբ նույնացնում էին արքա և աստված կերպարները, օժտում նրանց մարդկային հատկանիշներով և իհարկե պատկերում իրենց ժամանակաշրջանին հատուկ արքայական շքեղ հագուստով[8]: Հատկանշական է, որ ուրարտացիները Խալդիին անվանում էին «արքա»[9] և անգամ նրան նվիրաբերում էին հագուստ: Բորիս Պիոտրովսկու ուսումնասիրությունների համաձայն՝ առյուծը հանդիսացել է Խալդի աստծո գլխավոր խորհրդանշանը[10] (թեև այս տեսակետը որոշ գիտնականների կարծիքով չի կարող չափորոշիչ և անժխտելի աղացույց լինել աստվածությունների տարբերակման հարցում), ուստի կարելի է ենթադրել, որ առյուծի վրա կանգնած աստվածությունը Խալդին է: Առյուծի վրա կանգնած աստվածությունը որպես Խալդի ընդունելու վկայությունն է Էրեբունու Խալդի տաճարի որմնանկարներից մեկում պատկերված աստվածության կերպարը[11]: Ենթադրելի է, որ Խալդիի անվան տաճարում պետք է այդ աստվածությունը պատկերվեր (նկ. 2): Առյուծի վրա կանգնած աստվածությունների մոտիվը հայտնի է դեռևս հնագույն առաջավորասիական կնիքներից և կա-

վե դրոշմահետքերից (մ.թ.ա. III-II հազ.): Հիմք ընդունելով այն, որ ցուլն ուրարտական առասպելաբանության մեջ, ինչպես և խուրրիականում համարվել է տարերքի աստված Թեշուբի խորհրդանիշը, կարելի է եզրակացնել, որ ցլի վրա կանգնած է Թեյշեբան: Թվում է, այս գոտու հորինվածքում ուրարտացի վարպետը երկու աստվածությունների համար օգտագործել է նույն պատկերագրական կերպարը՝ կանգնեցնելով տարբեր խորհրդանշական կենդանիների վրա: Աստվածությունները պատկերված են գլխի և ոտքերի ամբողջությամբ կիսադեմ, իսկ մարմինը երեք քառորդով՝ դիմահայաց: Նման պատկերման ձևը հին արևելյան արվեստի յուրահատկություններից մեկն է, որը թույլ է տալիս երկչափ հարթության վրա եռաչափ մարմինը պատկերելիս ցույց տալ մարմնի բնորոշ առանձնահատկությունները: Բավական լավ է մտածված կանգնած մարմինների հավասարակշռվածության աղահովումը աստվածությունների մի ոտքը կենդանու գլխին, իսկ մյուսը՝ մեջքին դնելու եղանակով: Ուշագրավ է նրանց ձեռքերի միանման դիրքը. աջը օրհնության շարժումով, իսկ ձախ ձեռքում գլուխը դեպի ներքև իջեցրած ծաղկի նմանվող գավազանանման ինչ-որ իր: Նկատելի է Խալդի աստվածության եղջյուրազարդ խույրը: Հետաքրքրական է, որ եղջյուրներով գլխի հարդարանքների զարդարման պատկերագրական ավանդույթը եղել է անհիշելի ժամանակներից[12]: Եղջյուրազարդ գլխի հարդարանքները մեծ տարածում են ունեցել թե՛ հին Եգիպտոսի և թե՛ Միջագետքի մշակույթներում: Հավանաբար աստվածությունների խույրերի եղջյուրները խորհրդանշել են ցլին վերագրվող առնականություն, պտղաբերություն և ուժ: Դա վկայությունն է այն կարևոր նշանակության, որ ունեցել են կենդանիները մարդկության զարգացման վաղ տոտեմական մտածողության շրջանում[13], որը պահպանվել ու իր վերափոխված արտահայտությունն է գտել նաև հետագա դարերում: Ուրարտական աստվածությունների այդօրինակ գլխի հարդարանքների եռաչափ տեսքի վերաբերյալ կարելի է պատկերացում կազմել Թոփրաք Կալեից (Ռուսախինիլի) գտնված գոտու վրա կիսամարդ-կիսակենդանու քանդակի օրինակով (նկ. 3): Ելնելով այս գոտու ծաղկային մոտիվից, կարելի է նկատել, որ կենաց ծառն արտահայտված է ոճավորված ծաղկի տեսքով: Հատկանշական է, որ կենաց ծառը զարդարվեստում պարտադիր չէ, որ անպայման լինի ծառի տեսքով[14]: Պատկերված կենաց ծառի հիմքում գտնվող շրջագիծը ներկայացնում է հատիկ (սերմ), որից վեր են բարձրանում բույսի ոճավորված երեք հյուսածո ճյուղերը: Կենաց ծառն ավարտվում է խոշոր ծաղկաթերթ շրջագծով: Ծաղկային այս մոտիվը կարծես խորհրդանշում է դիցաբանական ու կրոնական համակարգերում հատկապես ընդգծված կյանքի զարգացող գիծը՝ ծնունդից մինչև աճ, պտղաբերություն, որն իր արտահայտությունն է գտել կենաց ծառի գաղափարում[15]: Այս գոտու հորինվածքում կենդանիների վրա կանգնած աստվածությունները

կարծես որոմես կենաց ծառ վեր են հառնում շրջանաձև հատիկից: Այս փաստը թույլ է տալիս ոտղաբերության գաղափարի հետ զուգորդել աստվածությունների և կենաց ծառի համատեղ պատկերագրությունը: Այստեղ անգամ կարելի է ենթադրել, որ ներսում խաչաձև դասավորված ծաղկահատիկներ պարունակող շրջանը կարող էր նաև հնում զուգորդվել արևի գաղափարի հետ՝ որոմես ոտղաբերության ու զարթոնքի գերբնական ուժ[16]: Կենաց ծառը Վանի թագավորության դիցաբանության մեջ համարվել է երկրագործական այն գլխավոր խորհրդանիշը, որը նվիրված է եղել մեռնող ու հառնող կամ սիրո և ոտղաբերության աստվածությունների գաղափարին[17]: Հավանաբար այսպիսի ուրարտական գոտիները, հագուստի և հարդարանքի մաս լինելով ունեցել են նաև մոգական նշանակություն: Հայտնի է, որ հնում գոտևորելով մարմինը այն պահպանում էին չար ուժերից[18]: Այսպիսով գոտիների վրա սրբազան կենդանիներ և աստվածություններ պատկերելով ուրարտացիներն իրենց պատկերացումներում հավանաբար մոտենում էին աստվածների աշխարհներին և սրբություններին[19]:

Նման պատկերազարդում ունի նաև Կարմիր բլուրից հայտնաբերված մեկ այլ բրոնզե գոտու բեկոր (նկ. 4): Ի տարբերություն առաջինի, այս գոտու պատկերազարդումը կատարված է գոտու երկայնական տարածությունը երկու պայմանական դաշտերի բաժանմամբ, շրջանակումը դարձյալ կատարված է ծաղկաշղթայով: Այս գոտու վրա, բացի Իսալդի և Թեյշեբա աստվածություններից, պատկերված է նաև Շիվինին: Ուշագրավ և բավական հետաքրքիր է ներկայացված արևի պաշտամունքը և Շիվինի աստվածությունը ուրարտական արվեստում: Այս գոտու վրա Շիվինին պատկերված է երիտասարդ, գլխաբաց, փարթամ գանգուր վարսերով, աջ ոտքի վրա ծնկած մի պատանու տեսքով, որը գլխավերևում պահում է արևի աստվածության խորհրդանիշը համարվող թևավոր նշանը: Շիվինին, ի տարբերություն Իսալդիի և Թեյշեբայի, ներկայացված է առանց խորհրդանշական կենդանու: Կարելի է նկատել, որ Շիվինիի կերպարն այս հորինվածքում գտնվում է Իսալդի և Թեյշեբա աստվածությունների հետ հաջորդական դասավորությամբ: Ելնելով աստվածությունների յուրահատուկ դասավորությունից՝ թվում է, թե այս գեղարվեստական հորինվածքը ներկայացնում է համաստեղությունների հաջորդական հերթակայություն: Առյուծի վրա կանգնած աստվածությունը խորհրդանշում է Իսալդիին, որին համապատասխանում է Առյուծի համաստեղությունը: Առյուծն ըստ կենդանական համաստեղությունների համապատասխանում է ամառային ժամանակաշրջանին: Այս առիթով կարելի է հիշատակել այն, որ հին Բաբելոնում, օրինակ՝ հուլիս-օգոստոս ամիսները կոչվել են կրակի ամիսներ և կենդանակամարում պատկերվել են առյուծի կերպարանքով[20]: Ցլի վրա կանգնած աստվածությունը թերևս Թեյշեբան է և միգուցե խորհրդանշում է Ցլի համաստեղությունը, այն համապատասխանում է

տարվա գարնանային ժամանակահատվածին (ապրիլի 10-14-ի ընթացքում արևը մտնում է Ցլի համաստեղություն, այդ ժամանակահատվածում սկսում է ցանքը, իսկ վեց ամիս անց արևը հաջորդում է առյուծի համաստեղությունը, երբ սկսվում է բերքահավաքի շրջանը): Շիվինիի կերոպարը որպես արևի աստվածություն թերևս ներկայացնում է աստվածությունների միջև արեգակնային դիրքը: Արևի աստվածությունը կարելի է կապել արեգակի և բնության զարթոնքի գաղափարի հետ: Դրա վկայությունն են նախ Շիվինիի երիտասարդ կերոպարը (կարելի է նկատել, որ Իսալդի և Թեյշեբա աստվածությունները պատկերվել են տարբեր տարիքում[21]), այնուհետև նրա ձեռքերի՝ արևի խորհրդանշանի հանդեպ ողջույնի դիրքը, ինչպես նաև գլխավերևում պատկերված արևի խորհրդանշանի ստորին հատվածում կախված բուսական մոտիվների առկայությունը: Հայտնի է նաև, որ Շիվինիի անունով է կոչվել ուրարտական արեգակնային ամիսներից մեկը (DUTU ITU[22]), որն ամենայն հավանականությամբ համապատասխանել է մարտ ամսին[23], երբ գարնանային զարթոնքը կապելով արևի պաշտամունքի հետ՝ ուրարտացիներն իրականացրել են կարևոր տոնական ծիսակատարություններ (գարնանային գիշերահավասարին են իրականացվել նաև ամանորյա տոնակատարությունները[24]): Կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ գոտիների վրա պատկերված են կրոնական սյուժեներ, որոնցում գլխավոր երկնային աստվածությունները խորհրդանշում են երկնային ուժերի կամ, ավելի ճիշտ՝ տարվա տարբեր եղանակների հաջորդականություն: Միերի դռան արձանագրությունում հիշատակված երկրագործական երեք տոնակատարություններից[25] հետևում է, որ ուրարտացիները, թերևս ինչպես եգիպտացիները[26], տարին բաժանել են երեք դեկադի ըստ երեք եղանակների՝ կապված իրենց կյանքում կարևոր դերակատարում ունեցող այգեգործական աշխատանքների հետ: Սա ևս փաստում է կրոնական պատկերագրության մեջ երեք գլխավոր աստվածությունների կարևորությունը և պատկերման առանձնահատկությունները: Աստվածությունների տարբեր տարիքային կերոպարների տարբեր խորհրդանշանների, ինչպես նաև պատկերագրության մեջ բազմիցս հանդիպող աստվածությունների հաջորդականության պատկերումը կարելի է համադրել տարվա երեք եղանակների փուլային փոփոխման հաջորդական հերթականության հետ[27]: Ասվածի վկայությունն է, օրինակ՝ ուրարտական կրոնական պատկերներով յուրօրինակ մի պաշտամունքային թիթեղ (նկ. 5), որի վրա գնդերով լցված տարածության մեջ իրար դեմ առ դեմ կենդանիների վրա կանգնած են երկու աստվածություններ: Պատկերված գնդերը հանդիսանում են ոչ միայն տարածությունը լցնող գեղարվեստական լուծում, այլև ցուցադրում են աստվածությունների երկնային տարածությունը: Առյուծի վրա հավանաբար կանգնած է Իսալդին, իսկ ցլի վրա՝ Թեյշեբան: Աստվածությունները պատկերված են ձեռ-

քերը առաջ ոարզած՝ կարծես միմյանց ողջունելիս: Այստեղ կերոարների միջև ոատկերված թռչունը կարելի է ընդունել որոոես Խալդիի, ինչոես նաև դեոի Թեյշեբան ուղղված արևի գաղափար: Թռչունները, ըստ նախնադարյան ոատկերացումների գտնվելով երկնքում, հնագույն ժամանակներից համարվում են նաև արևի կցորդ, նրա կենդանական խորհրդանշաններից մեկը, և կարող են կրել արեգակի գաղափարն ու նաև նրա գործառույթները[28]: Ասվածի աղացույց կարող են հանդիսանալ Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ ժայռաոատկերներում ոատկերված արևի գաղափարը մարմնավորող թռչունները[29]: Ուրարտական այս ոատկերային հորինվածքի գաղափարը կարելի է համեմատել հին եգիոտական ոատկերացումների հետ, որոնց համաձայն թռչնի կերոարում մարմնավորվում է արևը, ինչոես նաև մարդու հոգին մարմնից դուրս է գալիս թռչնի տեսքով[30]: Եգիոտական աղբյուրների համաձայն, ամառային արևի ոատկերը մեջ ներկայացվել է թռչնի կերոարանքով[31]: Աստվածությունների միջև ոատկերված թռչունն ընդունելով որոոես արև՝ կարելի է եզրակացնել, որ Խալդին, գտնվելով Առյուծի համաստեղության մեջ, իր դիրքն է հանձնում Ցլի համաստեղության մեջ գտնվող Թեյշեբային: Այն, որ հնագույն մշակույթներում համաստեղությունները կարող էին մարմնավորվել աստվածությունների կերոարում, վկայում են միջագետքյան սեղագիր աղբյուրները և հին շումերական գաղափարագրային համակարգում համաստեղությունների և դիցանունների համաոատասխան անվանումները[32]:

Վանի թագավորության արվեստում աստվածությունների և համաստեղությունների կաոի վկայության մի բացառիկ օրինակ է Անձավ հնավայրից հայտնաբերված մի վահանի բեկորի ոատկերագրական դրվագ (նկ. 6): Այստեղ Թեյշեբան ոատկերված է դարձյալ ցլի վրա կանգնած, աղեղներով զինված ռազմիկի կերոարանքով, և միայն նրա կերոարն է արևի թևավոր սկավառակի մեջ ներփակված: Թեյշեբայի այս կերոարը հիշեցնում է զրադաշտականության գերագույն աստվածության՝ Ահուրամազդայի նմանատիոլ ոատկերները: Թևավոր շրջանակը կարծես կրում է թռչունի և արևի միասնական գաղափարը, որի դեռևս անհայտ գործառույթը ըստ երևույթին աստվածությունը վերցնում է իր վրա: Բազմաթիվ ոատկերներում հանդիոող և սրբազան խորհրդանիշ համարվող աստվածություններին գոտևորող թևավոր սկավառակը միգուցե հնագույն մարտիկ աստվածություններին բնորոշ դեռևս անհայտ «աստվածային զենքի» մի տեսակ է, որի վերաբերյալ հիշատակություններ կարելի է գտնել զրադաշտական հնագույն գրվածքներում[33]: Ընդունելով, որ Թեյշեբան ոատկերված է տարբեր կենդանիների վրա կանգնած 11 այլ զինված աստվածությունների շարքում[34], կարելի է կարծել, որ այս հորինվածքում ոատկերված է աստվածային մի զորք, որն ըստ Ս.Հմայակյանի «Արև աստծո թիկնազորն է»[35]: Դա համե-

մատելի է արևի «12 թիկնապահների» մասին զրույցների հետ[36], որոնք հին հայկական իրականությունում համարվում էին արեգակնային 12 ամիսների աստվածություններ: Այս պատկերագրական հորինվածքը ամենայն հավանականությամբ ներկայացնում է ուրարտացիների կրոնական պատկերացումներում արեգակնային 12 ամիսներ խորհրդանշող աստվածություններին: Աստվածությունների զորքը առաջնորդող բոցարձակ աղեղնավոր կերպարը կարող է լինել արևի Շիվինի աստվածությունը[37]: Կարելի է կարծել, որ այս սյուժեում մարտիկի կերպարանքով արևի աստվածությունը առաջնորդում է արևի աստծո զորքին՝ Մհերի դռան արձանագրությունում հիշատակված սրբությունների երրորդ խմբում գտնվող Շիվինի աստծո զորքին՝ «Արտուարասիներ»-ին[38], որոնք իրենց հերթին կարող են համապատասխանել 12 ամիսների աստվածություններին կամ համաստեղություններին: Այս առիթով ուշագրավ է համեմատական զուգահեռ անցկացնել Մ. Աբեղյանի կողմից Վանի շրջանում գրի առած արևի վերաբերյալ մի զրույցի հետ, որում խոսվում է, թե ինչպես են արևի «12 թիկնապահները» խոնարհվում լեռներից դուրս եկող, հրեղեն վարսերով իրենց արև-արքային[39]: Նման բնույթ են կրում նաև հին եգիպտական առասպելները, որոնց համաձայն արևը տարբեր կերպարանքներ ստացած մարտնչում է իր թշնամիների դեմ[40]: Այս բոցավառ կերպարի և Շիվինիի՝ որպես կիզիչ ճառագայթներով զինված արևի աստվածության նմանությունը կարելի է փաստել նաև՝ ելնելով Արծկեի մի սեղագիր արձանագրության մեջ վկայված անեծքից, ուր արձանագրված է արևի աստծո՝ այրելու կարողության բանաձևը[41]: Այս առիթով ուշագրավ է մեջբերել մի կարծիք, ըստ որի Շիվինի անվան մեջ գոյություն ունի հնդեվրոպական նախալեզվից ծագող ues (լուսավորել, այրել) արմատը[42]: Բոցավառ արևի աստվածության կերպարի համեմատական զուգահեռ է միջագետքյան պատկերագրության մեջ լեռներից դուրս եկող, շողարձակող արևի աստված Շամաշը, որի արձակած կրակային ճառագայթների լույսը երկնքում սարսափեցնում էր թշնամիներին[43]: Վահանի պատկերագրական այս դրվագում փետրավոր նիզակով և խոշոր աղեղով զինված բոցավառ հերոսի տեսքով ներկայացված այս կերպարը հանդիսանում է հորինվածքի միջնամասում երկու տարբեր մոտիվների բաժանարար: Ուշագրավ է նաև կերպարների ձախից աջ դասավորության դիրքը, որը կրկնում է արևի երկնակամարային շարժման ուղղությունը[44]: Այս պատկերում շողարձակ կերպարի՝ որպես երկնային երևույթի և արև մարմնավորելու վկայությունն է նաև նրա դեպի աջ դիրքը: Հատկանշական է, որ երկնակամարում արևը դիտողի համար ձախից աջ դիրքում ներկայանում է միայն գտնվելով երկնքի հարավային մասում՝ աշնանային գիշերահավասարից սկսած[45]: Այս պատկերագրական սյուժեում մարտիկի կերպարանքով արևը հանդես է գալիս լույսի ու խավարի պայքարի կենտրոնում:

Այս բաժանումը արտացոլում է Շիվինիի՝ ինչպես միջագետքյան պատկերացումներում Շամաշից ճառագող լույսով շարի, սև ուժերի կործանում և լուսավորության բարիքի խորհուրդ[46]: Ուշագրավ է այն փաստը, որ արևի աստվածության մարդակերպ պատկեր ավելի հազվադեպ է հանդիպում ուրարտական պատկերներում, քան այն խորհրդանշող թևավոր սկավառակը: Արևի թևավոր սկավառակի պաշտամունքի հետաքրքրական օրինակ է ներկայացված Կարմիր բլուրից գտնված քառակողմ կնիքի դրոշմահետքի չորս հատվածներից մեկում (նկ. 7): Արևի սկավառակի տակ պատկերված աջ ոտքով ծնկած կերպարը ձեռքերը պարզել է դեպի գլխավերևում գտնվող արևի խորհրդանշանը: Երկրպագության նման տեսարան հանդիպում է նաև բազմաթիվ այլ օրինակներում: Այս տեսարանում թևավոր սկավառակը երկնային պաշտպանություն է խորհրդանշում երկրպագողի գլխավերևում: Ուրարտական միջավայրում միգուցե այդ պատկերացումն է ներկայացված, որի նմանօրինակ զուգահեռ հանդիպում է հին եգիպտական պատկերագրության մեջ, ուր արևի թևավոր պատկերը խորհրդանշում է ավելի շատ աստծո պաշտպանություն, քան թռիչք[47]: Արևի և իր թևավոր խորհրդանշանի հետ են հավանաբար զուգակցվում նաև ուրարտական հնավայրերից հայտնաբերված բրոնզե տարբեր կաթսաների հարդարանք հանդիսացող թևավոր կերպարները (նկ. 8): Ենթադրելի է, որ թռչուն-արև կապն է արտահայտված թռչնի թևերով կանացի կամ տղամարդու իրանով այդ կերպարներում:

Ուրարտական դիցարանի գլխավոր աստվածությունների պատկերներ հանդիպում են կրոնական ծիսակատարություններ ներկայացնող պաշտամունքային որոշ թիթեղներում: Օրինակ՝ Խալդի աստվածության երկրպագության բազմաֆիգուր հորինվածք է պատկերված Սերբար Թեփեից գտնված պաշտամունքայի թիթեղների վրա (նկ. 9, 10): Քառանկյուն գեղարվեստական հորինվածքները կառուցված են դարձյալ գնդերով լցված տարածության մեջ, ինչն ինքնին հաստատում է երկնային երևույթների հետ առնչվող ծիսակատարությունը: Այն, թե ո՛ր աստվածությունն է պատկերված հորինվածքներում գահին բազմած, կարելի է պարզել պատկերված այծերի առկայությամբ (Խալդիին մատուցվող այծի զոհաբերության տեսարան կարելի է տեսնել ուրարտական հնավայրերից հայտնաբերված մի շարք պաշտամունքային թիթեղների պատկերներում (նկ. 11, 12): Միերի դռան, ինչպես նաև այլ տեքստերի հիշատակությունների համաձայն՝ «Արևի Շիվինի» ամսին այծեր զոհաբերվել են միայն Խալդիին[48]: Այս այուժեում պատկերված է աստվածության սնունդ ընդունելու սրբազան ծիսակատարության տեսարան: Հայտնի է, որ Խալդիին զոհաբերվել են նաև հաց ու գինի: Այդ է վկայում Սարգոն 2-րդի հիշատակությունն այն մասին, թե ինչպես է Մուծածիրի տաճարից տարվել մի մեծ պղնձյա կաթսա, որն

Ուրարտուի արքաները Իսալդիի առջև զոհ մատուցելիս լցնում էին գինով[49]: Այս առումով ուշագրավ է նաև Կարմիր բլուրից գտնված 1500 լիտր տարողությամբ ողնձե կաթսան, որը Ս.Եսայանի կարծիքով կանգնած է եղել Թեյշեբաինի տաճարի առջև և զոհաբերության ժամանակ լցվել է գինով[50]: Միգուցե այս պաշտամունքային թիթեղի վրա Իսալդիի բարձրացված ձեռքում զոհաբերված գինով թաս է: Այս հորինվածքում կարծես վերակենդանացել է ծիսական արարողության սրբազան պահը: Հացի և գինու զոհաբերության հիշատակություն պահպանվել է օրինակ հեթիթական տեքստերում[51], որոնց համաձայն տաճարը համարվում էր աստծո տուն, ուր քրմերը բավարարում էին աստվածության «մարմնական կարիքները», որոնց մեջ մտնում էին նաև նրանց կերակրելն ու խմեցնելը[52]: Հին Միջագետքում աստվածներին մատուցվող ուտելիքները դրվում էին տաճարում դրված կուռքի առջև, և աստվածության կողմից դրանց ընդունման արարողակարգը երկրպագողների պատկերացումներում ուներ ծիսական և խորհրդավոր նշանակություն[53]: Ուրարտական տաճարներում ևս հավանաբար դրվել են աստվածությունների արձանները, որոնց առջև կատարվել են ծիսակատարություններ: Դա փաստվում է Սարգոն 2-րդի արձանագրությամբ, ըստ որի Մուծաշիրի Իսալդի տաճարից բազմաթիվ հարստությունների թվում առևանգվել են նաև Իսալդիի և իր կնոջ՝ Բագմաշթուի արձանները[54]:

1 Այս արձանագրությունը հանդիսանում է Վանի թագավորության կրոնի ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուր, ուր հիշատակված են մ.թ.ա. IX դարի թագավորության պաշտոնապես ընդունված բոլոր աստվածություններն ու պաշտամունքային հասկացությունները: Միհերի դուռ (Ագռավաքար) անվանումը ստացած ժայռախորշը գտնվում է Արևմտյան Հայաստանի (ներկայիս՝ Թուրքիա) Վանա ժայռի արևմտյան կողմում ավելի քան 50 մետր բարձրության վրա:

2 Г. Меликишвили, “Наири-Урарту”, *Древневосточные материалы по истории народов Закавказья*, 1, Тбилиси, 1954, стр. 365-366.

3 Б. Пиотровский, *История и культура Урарту*, Ереван, 1944, стр. 275.

4 Г. Меликишвили, «Центры культов верховных божеств урартийцев», *Сообщения академии наук грузинской ССР*, т.VII, н.6, Тбилиси, 1946, стр. 405.

5 И. Лосева, «Некоторые урартские ювелирные изделия с изображением ритальных сцен», *Древний мир*, Москва, 1962, стр. 304.

6 Меликишвили, *Наири-Урарту*, стр. 366.

7 Ж. Дюмезиль, *Верховные боги индоевропейцев*, Москва, 1986, стр. 17-29.

8 Ս. Եսայան, Ս.Հմայակյան, «Ուրարտական զգեստը», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 1980, հտ. 3, էջ 204:

9 И. Дьяконов, *Урартские письма и документы*, Москва-Ленинград, 1963, #12.

10 Б. Пиотровский, *Ванское царство (Урарту)*, Москва, 1959, стр. 223.

11 Կ. Հովհաննիսյան, *Էրեբունիի որմնանկարները*, Եր., 1973, նկ. 46:

12 Ա. Մանուչարյան, «Նախնադարյան կերպարվեստի թեմաները», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 2000, հտ. 2, էջ 185, նկ. 8/բ:

13 *Мифы, культы, обряды народов зарубежной Азии* (отв. ред. Н.Жуковская), Москва, 1986, стр. 5-20.

14 Ա.Մնացականյան, *Հայկական զարդարվեստ*, Եր., 1955, էջ 2:

15 В.Топоров, «Древо жизни», *Мифы народов мира*, Москва, 1987, т.1, стр.396.
16 Արևը խաչի, սվաստիկայի ձևով հայտնի է հնագույն ժամանակներից, Տես՝ Հ.Իսրայելյան, *Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում*, Եր., 1973, էջ 44-47:
17 Ա.Մնացականյան, «Վերստին Սուսասիրի տաճարի ճակտոնի խորհրդանշանի մասին», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 1977, հտ. 4, էջ 212:
18 Ա.Ստեփանյան, «Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային և նշանային համակարգերը)», *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, *Նյութեր և ուսումնասիրություններ*, 22, Եր., 2007, էջ 17:
19 S.Taronci, «Sacred animals and fantastic creatures of Urartian civilization», *A civilization in Eastern Anatolia-Urart*, International Conference, Kadir Has University, Istanbul, October 13-15, 2014, p.3.
20 Հ.Իսրայելյան, *Պաշտամունքն ու հավատալիքը*…, էջ 61:
21 Ս.Եսայան, «Искусство портретного изображения Урарту», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 1982, #3, էջ 180:
22 Г.Меликишвили, *Урартские клинообразные надписи*, Москва, 1960, #27,81,156.
23 Ս.Հմայակյան, *Վանի թագավորության դետական կրոնը*, Եր., 1990, էջ 76:
24 Ա.Օդաբաշյան, «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում», *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, 9, Եր., 1978, էջ 11-19:
25 Հմայակյան, *Վանի թագավորության*…, էջ 76:
26 Բ.Թումանյան, *Տոմարի դատմություն*, Եր., 1972, էջ 31:
27 Մ.Բադալյան, «Տարին և Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը», *Մերձավոր Արևելք*, Եր., 2009, VI, էջ 36:
28 Հ.Մարտիրոսյան, *Գիտությունը սկսվում է նախնադարում*, Եր., 1978, էջ 37:
29 Հ.Մարտիրոսյան, «Գեղամա լեռների ժայռաղատկերները», *Հայաստանի հնագիտական հուշարձանները*, 11, Եր., 1981, դրակ 3, էջ 46-47:
30 З.Соколова, *Культ животных в религиях*, Москва, 1972, стр.108-109, 154-156:
31 Г.Носовский, А.Фоменко, Т.Фоменко, *Звезды (Астрономические методы в хронологии. Альмагест Птолемея. Птолемей. Тихо Браге. Коперник. Египетские зодиаки.)*, т.2, Москва, 2006, стр.210.
32 Հ.Մարտիրոսյան, «Սիսիան, Ձորաց քարեր, Ցից քարեր, Քարահունջ», *Աստղագիտության կապն այլ գիտությունների, մշակույթի և հասարակության հետ*, Հայկական աստղագիտական ընկերության XIII տարեկան համաժողով, Եր., 2015, էջ 309:
33 М.Бойс, *Зороастрийцы. Верования и обычаи*, Москва, 1987, стр. 9:
34 Ս.Հմայակյան, «Էպիկական մի կերոպար վանտոսյան արվեստում», *Տարեգիրք*, Եր., 2006, էջ 14:
35 Հմայակյան, *Վանի թագավորության*…, էջ 29:
36 Ա.Տերյան, *Արտաստանի պաշտամունքը Հայաստանում*, Եր., 1995, էջ 39:
37 Ս.Պետրոսյան, «Անձավի ուրարտական վահանի առյուծների զույգը», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 2007, հտ. 1, էջ 262:
38 Ս.Հմայակյան, «Ուրարտական դիցարանի սրբությունները», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 1981, հտ. 3, էջ 207:
39 Մ.Աբեղյան, *Երկեր*, հտ. Է, Եր., 1975, էջ 42:
40 М.Матье, *Древнеегипетские мифы*, стр. 31-45.
41 Մ.Բադալյան, «Շիվինիի պաշտամունքը, պատկերագրությունը և խորհրդանշանները», *Մեծամոր, կենդարյա պեղումների տարեգրություն*, Եր., 2015, էջ 169:
42 Ս.Պետրոսյան, «Արևի աստվածը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ», *Պատմա-բանասիրական հանդես*, Եր., 2005, հտ. 3, էջ 234:
43 Д.Редер, *Мифы и легенды древнего Двуречья*, Москва, 1965, стр. 29.
44 Պետրոսյան, «Արևի աստվածը վաղ Ուրարտուի…», էջ 241:
45 Գ.Վրթանեսյան, «Գետաշենի սափորի (հիդրիայի) օրացուցային մոտիվները», *Աստղագիտության կապն այլ գիտությունների, մշակույթի և հասարակության հետ*, Հայկական աստղագիտական ընկերության XIII տարեկան համաժողով, Եր., 2015, էջ 357:

46 Б.Тураев Б, *История древнего Востока*, Ленинград, 1935, т.1, стр.140.
47 O.Keel, *The symbolism of the Biblical world. Ancient Near Eastern iconography and the book of Psalms*, Winona Lake, Indiana, 1997, p. 28, fig. 21.
48 И.Лосева, «Некоторые урартские…», стр. 306:
49 И.Дьяконов, «Ассиро-вавилонские источники по истории Урарту» (АВИИУ), *Вестник древней истории*, Москва, 1951, н.2-3, #49, стр.333.
50 Ս.Եսայան, *Կարմիր-Բլուր*, Եր., 1982, էջ 45:
51 В.Ардзинба, *Ритуалы и мифы древней Анатолии*, Москва, 1982, стр.114-115, 133-134.
52 Религии мира, *Всеобщая история*, Москва, 2011, стр.133.
53 А.Оппенхейм, *Древняя Месопотамия*, Москва, 1990, стр. 152.
54 Дьяконов, *АВИИУ*, #49, стр. 333.

INCONOGRAPHIC PECULIARITIES AND SYMBOLISM OF THE MAIN DIVINITIES OF THE VAN KINGDOM

GAYANE POGHOSYAN
PhD Student

The study of the iconographic features of the main gods Haldi, Teysheba and Shivini of Van kingdom pantheon allows to infer, that in religious art they are presented not only as divine images, but symbolize different periods of the year, constellations and celestial phenomena related to deities, which played an important role in urartian people's life. Urartian sacred images /icons/ with ritual motifs are created as a result of interaction between religious dogmatic ideology, human ideas, beliefs and mythological relation with other ancient cultures. The study of the iconography of these gods is an important clue for revealing the mysterious world of urartian spiritual culture.

ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ И СИМЖОЛИКА ГЛАВНЫХ БОЖЕСТВ ВАНСКОГО ЦАРСТВА

ГАЯНЭ ПОГОСЯН
аспирант

Изучение иконографических особенностей главных божеств пантеона Ванского царства Халди, Тейшеба и Шивини дает возможность заключить, что в культовом искусстве они являлись не только божественными образами, но и символизировали времена года, созвездия и разные небесные явления, которые имели важное значение в жизни урартийцев. Урартские своеобразные иконы с ритуальными мотивами создавались в результате религиозной догматической идеологии , человеческих представлений, верований и мифологических взаимосвязей с соседними культурами. Изучение иконографии этих божеств служит ключом раскрытия загадочного мира урартской духовной культуры.

1

2

3

1. Կարմիր բլուրից գտնված բրոնզե գոտու հատված
2. Խալդի աստծո պատկերը Էրեբունու Խալդիի տաճարի որմնանկարում
3. Թոփրաք Կալեից գտնված կիսամարդ-կիսակենդանու քանդակ
4. Կարմիր բլուրից գտնված բրոնզե գոտու հատված
5. Պաշտամունքային թիթեղ
6. Անձավի հնավայրից գտնված վահանի բեկոր

4

5

6

7

8

7. Կարմիր բլուրից գտնված քառակողմ կնիքի դրոշմահետքի հատված
8. Մարդու իրանով և թռչնի թևերով ձևավորված բրոնզե կաթսա
9, 10, 11, 12. Պաշտամունքային թիթեղներ

9

11

10

12